ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«23» մարտ 2017թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետի տեղակալ _____ Հ. Այունց

ԳԲԽ-27/17 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Կենտրոն) կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Իջի Փրոքյուրեմենտ» ՍՊԸ-ի 06.03.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «ԻՋի Փրոքյուրեմենտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«ԻՋի Փրոքյուրեմենտ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 06.03.2017թ. բողոքով հայտնել է, որ «Երևանի

ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի (այուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար գնումների գործընթացի աջակցման և մասնագիտական խորհրդատվության տրամադրման ձեռքբերման նպատակով 18.02.2017թ. հայտարարվել է «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ-03/17» ծածկագրով պարզեցված ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել երկու ընկերություններ՝ «ԻՋի Փրոքյուրեմենտ» ՍՊԸ-ն և «Յու Հեփի» ՍՊԸ-ն:

24.02.2017թ. կայացած նիստի թիվ 2 արձանագրության 2.1 կետի համաձայն՝ երկու ընկերությունների հայտերը ճանաչվել են բավարար և առաջարկել բանակցություններ հետևյալ պատճառաբանությամբ. տեխնիկական բնութագրով նախատեսված գնման համար 2017թ. ընթացքում նախատեսված է ավելի քիչ գումար, քան բավարար գնահատված մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներն, ուստի հայտերի բացման նիստը կասեցվում է և կազմակերվում են բանակցություններ գների նվազեցման շուրջ:

01.03.2017թ. Ընկերությունը նամակով դիմել է Պատվիրատուին հետևյալ բովանդակությամբ նամակով. «Որպես նիստի ներկա գտնվող հաստատում եմ, որ «Յու Հեփի» ՍՊԸ-ն հայտը ներկայացրել է երեք առանձին ծրարներով, մինչդեռ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանում է, որ փաստաթղթային ձևով հայտը ներկայացվելու դեպքում մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի (մեկ ծրարի) մեջ, որը սոսնձվում և կնքվում է: Օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի պահանջներին չհամապատասխանող հայտերը գնահատող հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում է ներկայացնողին»:

Ընկերությունը նշել է, որ Ընացակարգի գնահատող հանձնաժողովի արձանագրության մեջ նշված է, որ «Յու Հեփի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով նախատեսված բոլոր փաստաթղթերը, սակայն նշված չեն, որ տուժանքի մասին համաձայնագրում բացակայում է գլխավոր հաշվապահի ստորագրությունը, ինչը հանդիսանում է հայտի մերժման հիմք՝ ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն, որի

վերաբերյալ գոյություն ունի ՀՀ ֆինանսների նախարարության պարզաբանում, ինչպես նաև գնումների բողոքարկման խորհրդի որոշում:

Ընկերությունը նշել է նաև, որ «Յու Հեփի» ՍՊԸ-ի վճարման պահանջագիրը կնքված չէ, ինչպես նաև վճարման պահանջագրում նշված է ներկայացման ամսաթիվ, որը չպետք է նշվի վճարողի կողմից, այլ լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բակին վճարման պահանջագրի ներկայացման օրը, որը սահմանված է վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի 2-րդ տողում:

Չնայած այն բանի, որ վերը նշված սխալները համարվում են օրենքի կոպիտ խախտում և հայտը ենթակա է պարտադիր մերժման, «Յու Հեփի» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը հանձնաժողովը գնահատել է բավարար:

03.03.2017թ. ժամը 10:51-ին Ընկերության էլեկտրոնային հասցեին ստացվել է գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրությունը, որում գրված է. «...Հանձնաժողովն, ուսումնասիրելով «ԻՋի Փրոքյուրեմենտ» ՍՊԸ-ի տնօրենի գրությունը, ինչպես նաև այն, որ գնումների պլանում նշված առարկան ներառում է նաև այլ ծառայություններ ևս...: Հաշվի առնելով, որ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից տվյալ գնման համար նախատեսված գումարը կազմում է 600 000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ...»

Հանձնաժողովը որոշել է՝

1. «Յու Հեփի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը հրավերի պահանջներին չհամապատասխանելու պատճառով մերժել:
2. «ԻՋի Փրոքյուրեմենտ» ՍՊԸ-ի հետ առաջարկված գնի նվազեցման նպատակով վարել բանակցություններ:

Այսինքն, ըստ Ընկերության, ստացվում է, որ եթե Ընկերությունը չդիմեր Պատվիրատուին և ուշադրությունը հրավիրեր կոպիտ սխալների վրա, ապա «Յու Հեփի» ՍՊԸ-ի հայտը կճանաչվեր բավարար:

Ընկերությունը վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի նույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Ընկերությունը վկայակոչել է նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասը, որի համաձայն՝ անհատական ակտ է նույն հոդվածի առաջին մասում նշված մարմինների՝ իրենց լիազորությունների շրջանակում ընդունած իրավական այն ակտը, որն ունի ժամանակավոր կամ մշտական բնույթ, նախատեսված է մեկանգամյա կամ բազմակի կիրառման համար, չի պարունակում իրավական նորմ և սահմանում է վարքագծի կանոններ միայն դրանում ուղղակի անհատապես նշված (նախատեսված) ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ պետական կամ համայնքային հիմնարկների (այսուհետ՝ անձ) համար:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ Ընկերությունը գտնում է, որ գնումների պլանը և հանձնաժողովի կողմից ընդունված որոշումները (արձանագրության տեսքով) համարվում են անհատական իրավական ակտեր:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին պարբերության համաձայն՝ իրավական ակտը պետք է լինի լիակատար, ավարտված և լիովին կարգավորի ակտով նախատեսված հարաբերությունների բոլոր առանձնահատկությունները:

Նույն օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավական ակտերի լեզուն պետք է լինի պարզ, հստակ և մատչելի: Իրավական ակտերում չի թույլատրվում հնացած և բազմիմաստ բառերի ու արտահայտությունների, պատկերավոր համեմատությունների, այլաբանությունների, չափազանցությունների, փոխաբերական իմաստով բառերի կամ արտահայտությունների, թաքնված ենթատեքստերի, ինչպես նաև օտարալեզու տերմինների անհարկի օգտագործումը: Իրավական ակտում բազմիմաստ բառ օգտագործվելու դեպքում պետք է սահմանվի, թե բառը որ իմաստով է օգտագործվում:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և

արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Ընկերությունը արձանագրում է, որ «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի պատասխանատու անձանց պնդումը (ամրագրված է 02.03.2017թ. թիվ 3 արձանագրությամբ), որ 2017թ. հաստատած գնումների փոփոխված պլանի «միջանցիկ կոդ ըստ CPV դասակարգման» 79411210 CPV կոդով և «գնումների գործընթացի աջակցման և մասնագիտական խորհրդատվության տրամադրման ծառայությունների մատուցում» անվանմամբ գնման ծառայության արժեքը ոչ թե 6 600 000 ՀՀ դրամ է, այլ 600 000 ՀՀ դրամ իրավական առումով հնարավոր չէ:

Ընկերությունը նշել է, որ Կարգի «Գնումների միասնական անվանացանկի (ԳՄԱ) կառուցվածքը» հաստատելու մասին հավելված 3-ի համաձայն «... վերջին երեք նիշերից յուրաքանչյուրը դասին պատկանող գնման առարկաների նկարագիրն ավելի է հստակեցնում...»: Այսինքն Պատվիրատուն լրացնելով բոլոր 8 նիշերը հստակ պատկերացում ուներ գնման առարկայի նկարագրի և գնի վերաբերյալ:

Ավելին, 2016թ. Պատվիրատուի կողմից կազմակերպվել է նույնանման գնման ընթացակարգ, որի անվանումը և CPV կոդը համընկնում են 2017թ. հայտարարված ընթացակարգի անվանման և CPV կոդի հետ: 2016թ. գնման պլանով նախատեսված գինը եղել է 6 200 000 ՀՀ դրամ և այդ ընթացակարգը հաղթել է «Յու Հեփի» ՍՊԸ-ն 5 500 000 ՀՀ դրամով: Հատկանշական է այն հանգամանքը, որ այդ ժամանակ Պատվիրատուն չի բանակցել «Յու Հեփի» ՍՊԸ-ի հետ գնի իջեցման վերաբերյալ (600 000 ՀՀ դրամ):

Ըստ Ընկերության՝ վերոգրյալի ամփոփումից հետևում է, որ Պատվիրատուի կարիքների համար գնումների գործընթացի աջակցման և մասնագիտական խորհրդատվության տրամադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ 03/17» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.02.2017թ. թիվ 2 արձանագրությամբ և 02.03.2017թ. թիվ 3 արձանագրությամբ թույլ են տրվել իրավական կոպիտ խախտումներ: Փորձ է արվում

խեղաթյուրել և յուրովի մեկնաբանել իրավական ակտերի բուն իմաստը և նշանակությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 45-րդ և 48-րդ հոդվածի պահանջներով՝ Ընկերությունը բողոքով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի խնդրել է՝

1. Կիրառել ժամանակավոր միջոց՝ կասեցնել «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ-03/17» ծածկագրով պարզեցված ընթացակարգը և (կամ) Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի կողմից «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ-03/17» ծածկագրով պարզեցված ընթացակարգի շրջանակներում կայացված ցանկացած այլ որոշման կատարումը:

2. Դադարեցնել «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար գնումների գործընթացի աջակցման և մասնագիտական խորհրդատվության տրամադրման ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ-03/17» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.02.2017թ. թիվ 2 արձանագրության 2.2 և 2.3 կետերով և 02.03.2017թ. թիվ 3 արձանագրության 3-րդ կետով կայացված որոշումները:

Ընկերությունն, ի լրումն բողոքի, 13.03.2017թ. գրությամբ պահանջել է դադարեցնել «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար գնումների գործընթացի աջակցման և մասնագիտական խորհրդատվության տրամադրման ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ-03/17» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.03.2017թ. թիվ 4 որոշումը և կասեցնել «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ-03/17» ծածկագրով պարզեցված ընթացակարգը և (կամ) Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի կողմից «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ-03/17» ծածկագրով պարզեցված ընթացակարգի շրջանակներում կայացված ցանկացած այլ որոշման (գործողության) կատարումը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ-27/17 բողոքը քննող հանձնաժողովի 10.03.2017թ. ժամը 16:10-ի և 20.03.2017թ. ժամը 17:20-ի նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. **<u>«Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

«Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն 10.03.2017թ. թիվ 172 գրությամբ հայտնել է, որ սույն թվականի մարտի 1-ին «ԻՋի Փրոքյուրեմենտ» ՍՊԸ-ն Պատվիրատուին հասցեագրել է գրություն «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ 03/17» ծածկագրով պարզեցված ընթացակարգի վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հաշվի առնելով վերը նշված գրությունը, 02.03.2017թ. հրավիրել է գնահատող հանձնաժողովի նիստ և համաձայն նիստի արձանագրության «Յու Հեփի» ՍՊԸ-ի հայտը մերժվել է, իսկ Ընկերության հայտը գնահատվել է բավարար:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի «Թեժ գծից» 02.03.2017թ. ժամը 16:22-ին ստացվել է գրություն Ընկերության բողոքի վերաբերյալ, որին 03.03.2017թ. ուղարկվել է պատասխան գրությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը միաժամանակ հիմք ընդունելով այն, որ գնումների պլանի լրացման կարգի համաձայն գնման առարկաները լրացվում են (խմբավորվում են) 4-րդ մակարդակի ծածկագրերով (խմբերով), իսկ նախահաշվային գինը որոշվում է 2-րդ մակարդակով, Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման ու զարգացման միջազգային բանկի հետ 08.04.2015թ. կնքված վարկային համաձայնագրի 8495-AM իրականացման համաձայնագրի Ցանկի Բաժին II-ի 3-րդ կետի և 12.05.2016թ. կնքված 8615-AM վարկային համաձայնագրի 2-րդ Ցանկի Բաժին III-ի «B» կետի և «C» կետի, «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն ունի միջազգային պայմանագրերով ամրագրված պարտավորություններ իրականացնելու Վերակառուցման ու զարգացման միջազգային բանկի համար ընդունելի ընթացակարգերով (ընդունելի խորհրդատուների կարճ ցուցակներ, առաջադրանքի պայմաններ, ՎԶՄԲ Ընդհանուր դրույթներին համապատասխանություն) թվով յոթ առաջադրանքների համար Անկախ հավաստող գործակալներ և աուդիտներ: Վերջիններիս ընկերության համապատասխանությունը Վերակառուցման ու զարգացման միջազգային բանկի պահանջներին նախապայմաններ են միջազգային

պայմանագրեր հանդիսացող վարկային համաձայնագրերի պահանջների բավարարմամբ գումարների ստացման համար:

Վերը նշված խորհրդատվությունների իրականացումը ուղիղ կապված է նրանց ֆինանսավորման հետ:

Պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ընդունելով ի գիտություն այն, որ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրով գնման համար նախատեսված է ավելի քիչ գումար քան Ընկերության կողմից առաջարկված գինը, վերջինիս 06.03.2017թ. ժամը 14:00-ից մինչև 14:30-ը հրավիրել է բանակցությունների գնի նվազեցման նպատակով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը փաստելով այն, որ «ԻՋի Փրոքյուրեմենտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները չներկայացան բանակցությունների և հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետի «զ» կետը (բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե մասնակիցների ներկայացված գները դեռևս գերազանցում են գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, գնման ընթացակարգը հայտարարվում է չկայացած և պայմանագիր չի կնքվում), իր 06.03.2017թ. թիվ 4 արձանագրությամբ որոշել է Ընթացակարգի հայտարարել չկայացած:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ-27/17 բողոքը քննող հանձնաժողովի 10.03.2017թ. ժամը 16:10-ի և 20.03.2017թ. ժամը 17:20-ի նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր առարկել են բողոքի դեմ և հայտնել, որ գնման պլանով նախատեսվել է գնման ենթակա ծառայության խմբաքանակը և Ընթացակարգով նախատեսված գնման առարկան կազմում է ծառայության խմբաքանակի մի մասը, որի գնման համար նախատեսվել է 600 000 ՀՀ դրամ:

4. ԳԲԽ-27/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-27/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար գնումների գործընթացի աջակցման և մասնագիտական խորհրդատվության տրամադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ 03/17» ծածկագրով ընթացակարգը:

2. Ընթացակարգի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ձեռքբերող ծառայությունը հանդիսանում է գնումների գործընթացի աջակցման և մասնագիտական խորհրդատվության տրամադրման ծառայությունների մատուցումը, որը կատարվում է՝

- «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված պատասխանատու ստորաբաժանումների և/կամ գնահատող հանձնաժողովների կողմից գնման ընթացակարգերի կազմակերպման և անցկացման շրջանակներում հաստատվելիք փաստաթղթերի նախագծերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխանության վերաբերյալ, բացառությամբ գնման առարկաների տեխնիկական բնութագրերի և պայմանագրի կատարման արդյունքները ընդունվելու գործընթացի.
- Գնահատող հանձնաժողովների կողմից գնման հայտերի գնահատման վերաբերյալ, բացառությամբ տեխնիկական բնութագրերի համարժեքության գնահատման գործընթացի.
- Գնումների պլանում ներառյալ դրանում կատարվող փոփոխություններում ներառվող գնման առարկաների ձեռք բերման նպատակով կիրառվելիք գնման ձևերի ընտրության վերաբերյալ.
- Գնման ընթացակարգերի կազմակերպման և անցկացման նպատակով համապատասխան մարմինների ներկայացվող իրավական ակտերի նախագծերի պատրաստման վերաբերյալ.
- «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում՝ կազմակերպված գնման ընթացակարգերի վերաբերյալ, համապատասխան մարմիններին ներկայացվող հաշվերտվությունների պատրաստման վերաբերյալ.
- Շրջանակային համաձայնագրերով ավիասպասարկման ծառայությունների ձեռք բերման և առանց հայտարարությունը նախապես հրապարակելու ձևով

բանակցային ընթացակարգով գնման ընթացակարգերի կազմակերպման վերաբերյալ:

Միաժամանակ կատարողը Պատվիրատուի կողմից սահմանվող դեպքերում վերջինիս մատուցում է նաև մինչև 30 հատ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ շրջանակային համաձայնագրերով (բացառությամբ ավիասպասարկման ծառայության), բաց, պարզեցված, մրցակցային երկխոսության և գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու ձևով բանակցային ընթացակարգերով գնման գործընթացների կազմակերպման շրջանակում «Գնումների մասին» ՀՀ օրենքով գնումների համակարգողին վերապահված գործառույթների կատարում, բացառությամբ հայտերի և/կամ գնային առաջարկների, ներառյալ ծրարների ընդունման և գրանցամատյանում գրանցման գործառույթի:

3. Պատվիրատուի կողմից 15.02.2017թ. հաստատված գնման պլանով 79411210 միջանցիկ CPV կոդի տակ նախատեսել է գնումների գործընթացի աջակցման և մասնագիտական խորհրդատվության տրամադրման ծառայությունների մատուցումը, որի համար նախատեսվել է 6 600 000 ՀՀ դրամ ծախս:

4. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած Ընկերություններից՝ «ԻՋի Փրոքյուրեմենտ» ՍՊԸ-ի գնային առաջարկը կազմել է 5 400 000 ՀՀ դրամ, իսկ «Յու Հեփի» ՍՊԸ-ի գնային առաջարկը՝ 6 585 000 ՀՀ դրամ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.02.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 2.1 կետով հայտեր ներկայացրած վերը նշված երկու ընկերությունների հայտերը գնահատվել է բավարար, իսկ նույն արձանագրության 2.2 և 2.3 կետերով գնահատող հանձնաժողովը ամրագրել է, որ քանի որ տվյալ տեխնիկական բնութագրով նախատեսված գնման համար 2017թ. ընթացքում նախատեսված է ավելի քիչ գումար, քան բավարար գնահատված մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները, և բացակայում է մասնակիցներից մեկը, ուստի Կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ նիստը կասեցնել և էլեկտրոնային եղանակով ծանուցել մասնակիցներին հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով վարվող միաժամանակյա բանակցությունների մասին:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.03.2017թ. ժամը 16:30-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Յու Հեփի» ՍՊԸ-ի հայտը մերժվել է՝ հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով, իսկ «ԻՋի Փրոքյուրեմենտ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է բավարար և որոշվել է Ընկերության կողմից առաջարկված գնի նվազեցման նպատակով վարել բանակցություններ:

7. Վերոհիշյալ արձագրությամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նշել է, որ գնումների պլանում նշված առարկան ներառում է նաև տարվա ընթացքում գնվելիք այլ ծառայություններ ևս, քանի որ Պատվիրատուն ունի նաև միջազգային պայմանագրերով իրականացվող ծրագրեր և դրանց շրջանակներում իրականացվող մրցույթների ընթացքում ևս առաջանալու է խորհրդատվության և օգնության կարիք: Այդ ընթացակարգերը հիմնականում իրականացվում են միջազգային պայմանագրով սահմանված կարգով իսկ դրանց ճիշտ իրականացումը ուղիղ կապված է ֆինանսավորման հետ: Ինչ վերաբերում է Ընթացակարգին, ապա «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից տվյալ գնման համար նախատեսված գումարը կազմում է 600 000 ՀՀ դրամ:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.03.2017թ. ժամը 14:30-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետի «զ» պարբերությունը, որոշել է «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ 03/17» ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած, քանի որ «ԻՋի Փրոքյուրեմենտ» ՍՊԸ-ն չի ներկայացել գնային առաջարկի նվազեցման շուրջ կազմակերպված բանակցություններին:

5. ԳԲԽ-27/17 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունն, ուսումնասիրելով «ԻՋի Փրոքյուրեմենտ» ՍՊԸ-ի 06.03.2017թ. բողոքը, «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի 10.03.2017թ. թիվ 172 գրությունը և կից փաստաթղթերը հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գնումների պլանները հաստատվում են ըստ գնման առարկայի, քանակի, ընդհանուր գնի, գնման ձևի: Դրանք հրապարակվում են տեղեկագրում, բացառությամբ պետական, ծառայողական և բանկային գաղտնիք պարունակող գնումների պլանի:

Կարգի 14-րդ կետի համաձայն՝ գնումների պլանի ձևը և դրա լրացման ու հրապարակման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը, իսկ գնումների միասնական անվանացանկի բացվածքը՝ ըստ թվային ծածկագրի յուրաքանչյուր բաժնի խմբերի, դասերի և դասակարգիչների սահմանում և տեղեկատուում հրապարակում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը:

Կարգի 15-րդ կետի համաձայն գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է:

Կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետի «ա», «բ» և «զ» ենթակետերի համաձայն՝ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները՝

ա. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

զ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե մասնակիցների ներկայացրած գները դեռևս գերազանցում են գնումը կատարելու

համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, գնման ընթացակարգը հայտարարվում է չկայացած, և պայմանագիր չի կնքվում:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշման հավելված 3-ով հաստատված «Գնումների միասնական անվանացանկի (ԳՄԱ) կառուցվածքի» 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ հիմնական անվանացանկն ունի ծառի կառուցվածք և կազմված է մինչև ութ նիշ ունեցող ծածկագրերից, որոնք կապված են պայմանագրի առարկան հանդիսացող ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումը նկարագրող բառերի հետ: Թվային ծածկագիրը բաղկացած է 8 նիշից և բաժանված է հետևյալ կերպ՝

1) առաջին երկու նիշերը ցույց են տալիս բաժինը (XX000000).

2) երրորդ նիշը ցույց է տալիս խումբը (XXX00000).

3) չորրորդ նիշը՝ դասը (XXXX0000).

4) հինգերորդ նիշը՝ դասակարգիչը (XXXXX000):

3.Վերջին երեք նիշերից յուրաքանչյուր դասին պատկանող գնման առարկաների նկարագիրն ավելի է հստակեցնում:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից gnumner.am համացանցային կայքում հրապարակված գնումների միասնական անվանացանկի բացվածքի համաձայն՝ «7941120» միջանցիկ կոդի տակ նախատեսված «գնումների հետ կապված խորհրդատվական ծառայություններ» դասակարգիչը մտնում է «բիզնես և կառավարման խորհրդատվական ծառայություններ» դասի մեջ, որն էլ իր հերթին ներառված է «բիզնես և կառավարման խորհրդատվություն և հարակից ծառայություններ» խմբի մեջ:

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից 12.02.2017թ. հաստատված Պատվիրատուի 2017թ. փոփոխված պլանով «79411210» միջանցիկ կոդով նախատեսվել է ***«Գնումների գործընթացի աջակցման և մասնագիտական խորհրդատվության տրամադրման ծառայությունների մատուցում» գնման առարկան, որի համար նախատեսվել է 6 600 000 ՀՀ դրամ ծախս:***

Պատվիրատուի կողմից «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար գնումների գործընթացի աջակցման և մասնագիտական խորհրդատվության

տրամադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ 03/17» ծածկագրով ընթացակարգը:

Ընթացակարգի տեխնիկական բնութագիր-գնման ժամանացույցով որպես գնման առարկա նշվել է «Գնումների գործընթացի աջակցման և մասնագիտական խորհրդատվության տրամադրման ծառայությունների մատուցումը»:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել երկու մասնակից, որոնցից «ԻՋի Փրոքյուրեմենտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը կազմել է 5 400 000 ՀՀ դրամ, իսկ «Յու Հեփի» ՍՊԸ-ի գնային առաջարկը՝ 6 585 000 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.03.2017թ. ժամը 16:30-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «ԻՋի Փրոքյուրեմենտ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է բավարար: Միևնույն ժամանակ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նշել է, որ որ գնումների պլանում նշված առարկան ներառում է նաև տարվա ընթացքում գնվելիք այլ ծառայություններ ևս, քանի որ Պատվիրատուն ունի նաև միջազգային պայմանագրերով իրականացվող ծրագրեր և դրանց շրջանակներում իրականացվող մրցույթների ընթացքում ևս առաջանալու է խորհրդատվության և օգնության կարիք: Այդ ընթացակարգերը հիմնականում իրականացվում են միջազգային պայմանագրով սահմանված կարգով իսկ դրանց ճիշտ իրականացումը ուղիղ կապված է ֆինանսավորման հետ: Ինչ վերաբերում է Ընթացակարգին, ապա ***«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից տվյալ գնման համար նախատեսված գումարը կազմում է 600 000 ՀՀ դրամ:*** Ուստի որոշվել է Ընկերությանը ծանուցել գնային առաջարկի նվազեցման նպատակով միաժամանակյա բանակցություններ հրավիրելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.03.2017թ. ժամը 14:30-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետի «զ» պարբերությունը, որոշել է «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ 03/17» ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած, քանի որ «ԻՋի Փրոքյուրեմենտ» ՍՊԸ-ն չի ներկայացել գնային առաջարկի նվազեցման շուրջ կազմակերպված բանակցություններին:

Այսպիսով՝ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից հաստատված գնման պլանի համաձայն՝ գնումների գործընթացի աջակցման և մասնագիտական խորհրդատվության տրամադրման ծառայությունների ձեռքբերման համար նախատեսվել է 6 600 000 ՀՀ դրամ: ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշման հավելված 3-ով հաստատված «Գնումների միասնական անվանացանկի (ԳՄԱ) կառուցվածքի» 3-րդ կետով սահմանվում է, որ վերջին երեք նիշերից յուրաքանչյուր դասին պատկանող գնման առարկաների նկարագիրն ավելի է հստակեցնում: Պատվիրատուի գնման պլանում գնման ենթակա համապատասխան ծառայությունը նախատեսվել է «79411210» միջանցիկ CPV կոդի ներքո: Այսինքն տվյալ դեպքում գնման առարկայի նկարագիրը Պատվիրատուի կողմից հստակեցված է, քանի որ «79411210» CPV կոդը ներառված է «79410000» կոդի տակ, որն էլ իր հերթին՝ «79400000» CPV կոդի տակ: Հետևաբար հաշվի առնելով, որ գնման պլանը հաստատվում է ըստ գնման առարկայի, քանակի, ընդհանուր գնի, գնման ձևի, ուստի տեղեկագրում հրապարակված Պատվիրատուի գնման պլանով հստակ սահմանված է գնման առարկան և այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը՝ այն է 6 600 000 ՀՀ դրամ, ուստի նշված ընթացակարգին հայտ ներկայացնելիս մասնակիցը կարող է ողջամտորեն ենթադրել, որ գնման առարկայի նախահաշվային գինը հանդիսանում է Պատվիրատուի գնման պլանում նշված գինը: Ավելին, ըստ Ընթացակարգի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի՝ գնման առարկան հանդիսանում է գնումների գործընթացի աջակցման և մասնագիտական խորհրդատվության տրամադրման ծառայությունների ձեռքբերումը, որպիսի պայմաններում Ընկերությունը կարող էր ողջամտորեն ենթադրել, որ Ընթացակարգի գնման առարկան ամբողջությամբ համընկնում է Պատվիրատուի գնման պլանի մեջ նշված գնման առարկայի և դրա համար նախատեսված ֆինանսնական միջոցների հետ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերության կողմից հայտով ներկայացված գնային առաջարկը, այն է՝ 5 400 000 ՀՀ դրամը չի գերազնցել այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, ուստի Պատվիրատուն չէր կարող հրավիրել Ընկերության կողմից առաջարկված գնի նվազեցման նպատակով միաժամանակյա բանակցություններ: Հետևաբար, Կենտրոնը

գտնում է, որ Պատվիրատուն, կիրառելով Կարգի 44-րդ կետը, գործել է ոչ իրավաչափ, քանի որ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը չի գերազանցել Պատվիրատուի կողմից հաստատած գնման պլանով տվյալ գնման առարկայի համար նախատեսված ֆինանսական միջոցները: Դրանից ուղղակիորեն բխում է նաև այն, որ Պատվիրատուի կողմից Ընթացակարգը չէր կարող չկայացած հայտարարվել:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է, որ «ԻՋի Փրոքյուրեմենտ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման: Ուստի Խորհրդին առաջարկում ենք բողոքը բավարարել՝

ա) դադարեցնել «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ 03/17» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.02.2017թ. թիվ 2 արձանագրության 2.2-րդ և 2.3-րդ կետերով և 02.03.2017թ. թիվ 3 արձանագրության 3-րդ կետով կայացված որոշումները:

բ) դադարեցնել «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ 03/17» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.03.2017թ. թիվ 4 արձանագրությամբ կայացված «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ 03/17» ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը:

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի պետ՝ Ռ. Մկրտչյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ԳԲԽ-27/17 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ծատուրյան